

**Վիտամին Բ6-ը (և մագնեզիումը) օտիզմի բուժման մեջ**

Bernard Rimland, Ph.D.  
Autism Research Institute  
4182 Adams Avenue  
San Diego, CA 92116

Ինձ ծանոթ բոլոր 18 ուսումնասիրությունները, որտեղ վիտամին Բ6-ը արժևորվել է որպես օտիստիկ երեխաների բուժում, տվել են դրական արդյունքներ: Սա նշանակալի նվաճում է, քանի որ որպես օտիզմի դարման արժևորված շատ դեղեր տվել են խիստ անհետևողական արդյունքներ: Եթե մի դեղ արժևորման ուսումնասիրություններից մոտավորապես կեսում ցույց է տվել դրական արդյունքներ, այն համարվում է հաջող և հետևաբար պաշտպանվում է դեղի օգտագործումը օտիստիկ հիվանդների կողմից: Բայց և այնպես, հակառակ օտիզմի բուժման նպատակով վիտամին Բ6-ի օգտագործմանը վերաբերվող հետազոտությունների նշանակալի հետևողական արդյունքներին, և հակառակ նրան, որ այն անշափ ավելի ապահով է օտիստիկ երեխաների համար օգտագործված մյուս բոլոր դեղերից, ներկայումս շատ քիչ են կիրառողները, ովքեր օգտագործում են այն կամ պաշտպանում են նրա օգտագործումը օտիզմի բուժման համար:

Օտիստիկ երեխաների համար վիտամին Բ6 օգտագործելու հետազոտություններն սկսվեցին 1960-ականներին: 1966 թվին, երկու բրիտանացի ներվաբաններ՝ A. F. Heeley և G. E. Roberts, տեղեկագրեցին, որ 19 օտիստիկ երեխաներից 11-ը իրենց մեզի հետ անբնական նյութափոխանակիչներ են դուրս մղել տրայտոֆանի ստուգման ժամանակ: Այս երեխաներին 30 մգ վիտամին Բ6-ի միակ դեղահատ տալով՝ նրանց մեզը բնական էր դարձել. բայց և այնպես, վարվեցողական ուսումնասիրություններ չէին կատարվել: Գերմանացի հետազոտող V. E. Bonisch-ը 1968 թվին տեղեկագրեց, որ 16-ից 12 օտիստիկ երեխաներ ցույց են տվել նկատառելի վարվեցողական բարելավում, երբ նրանց տրվել է բարձր դեղաչափով (100-ից 600 մգ օրական) վիտամին Բ6: Bonisch-ի հիվանդներից երեքը առաջին անգամ լինելով խոսել են վիտամին Բ6-ը այս բաց կլինիկական փորձարկման ժամանակ տնորինվելուց հետո:

Իմ Infantile Autism գրքի հրատարակությունից հետո 1964 թվին, ես սկսեցի ստանալ հարյուրավոր ամսական օտիստիկ երեխաների ծնողներից, ողջ Միացյալ Նահանգների տարածքից, որոնց մեջ էին այնպիսիներ, որոնք փորձել էին այդ ժամանակվա համար նոր «մեզավիտամինային բուժումը» իրենց օտիստիկ երեխաների վրա: Ծատեր սկսել էին զանազան վիտամիններ փորձարկել իրենց օտիստիկ երեխաների վրա՝ հայտնի սննդագետների կողմից գրված գրքեր կարդալու հետևանքով: Սկզբում ես բավականին թերահավատ էի մի շարք ծնողների տեղեկագրած նշանակալի բարելավումների մասին, բայց երբ ապացույցները կուտակվեցին, իմ հետաքրքրությունը արթնացավ: Իմ հասցեացանկի վրա գտնվող 1,000 ծնողների ուղարկված ամսականներից պարզվեց, որ 57-ը փորձարկումներ էին կատարել մեծ դեղաչափի վիտամիններով: Նրանցից շատեր դրական արդյունքներ էին նշմարել իրենց երեխաների մոտ: Որպես հետևանք, ես ձեռնարկեցի մի ծավալուն ուսումնասիրության 200 օտիստիկ երեխաների վրա, նրանց տալով մեզադոզ քանակներով վիտամին Բ6, Գիսսինամիդ, պանտոթենիկ թթու և վիտամին Ց, ուսումնասիրության նպատակով հատուկ մշակված բազմավիտամինանոց դեղահատների հետ մեկտեղ: Երեխաները իրենց ծնողների հետ էին բնակվում ողջ Միացյալ Նահանգների և Կանադայի տարածքում, և նրանցից յուրաքանչյուրը բժշկական հսկողության ներքո էր ընտանեկան բժշկի կողմից: (600-ից ավելի ծնողներ կամավոր էին ներկայացել ուսումնասիրության համար, բայց նրանց մեծ մասը չէր կարողացել հաղթահարել իրենց բժիշկների թերահավատությունը:)

Չորս ամիս տևած փորձարկումի վերջում, արդեն հստակ էր, որ վիտամին Բ6-ը հետազոտվող չորս վիտամիններից ամենակարևորն էր, և որ որոշ դեպքերում այն առաջացրել էր նշանակալի բարելավում: Երեխաների 30-ից 40 տոկոսը ցուցաբերեց նշանակալի բարելավում վիտամին Բ6 ընդունելուց հետո: Երեխաներից մի քանիսը դրսևորեցին աննշան կողմնակի բարդություններ (դյուրագրգռություն, աղմուկի նկատմամբ զգայնություն և

անկողնում թրջել), բայց սրանք շուտով անհետացան՝ երբ լրացուցիչ մագնեզիում տրվեց նրանց և մագնեզիումը հիմնավորեց լրացուցիչ նպաստներ:

Երկու տարի հետո, երկու գործակիցների հետ միասին ձեռնարկեցի երկրորդ փորձառական ուսումնասիրության, որը վերաբերվում էր օտիստիկ երեխաները մեգավիտամիններով բուժելուն, այս անգամ կենտրոնանալով վիտամին Բ6-ի և մագնեզիումի վրա: Իմ գործակից հետազոտողներն էին պրոֆեսորներ Enoch Callaway-ը, Սան Ֆրանցիսկոյի University of California Medical Center-ից, և Pierre Dreyfus-ը, Դեյվիսի University of California Medical Center-ից: Կրկնակի կույր պլաստիքով կառավարված խաչաձև փորձարկումը ընդգրկեց 16 օտիստիկ երեխաներ և նորից դրսևորեց վիճակագրականորեն նշանակալի արդյունքներ: Երեխաների մեծ մասի դեպքում դեղաչափերը տատանվում էին օրական 300-ից 500 մգ Բ6-ի միջև: Նաև տրվում էին օրական մի քանի հարյուր մգ մագնեզիումի և բազմակի Բ դեղահատներ՝ պաշտպանելու համար Բ6-ից առաջացող մյուս սնուցիչների անբավարարության դեմ: (Շատ հավանական է, որ ժամանակավոր թմրածությունը և ծակծկոցները, որոնք առաջանում էին Բ6-ի մեգադոզից և որոնք տեղեկագրվել էին Schaumburg-ի և իր գործակիցների կողմից, հետևանքն էին ուրիշ սնուցիչների անբավարարությունների, որոնց դոզապատճառը Բ6-ի մեծ քանակների ընդունումն էր՝ մի հիմարական արարք:)

Երկու ուսումնասիրություններում էլ երեխաները ցույց տվեցին զարմանալիորեն վիտամին Բ6-ի օգուտների լայն տեսականի: Աչքերով շփումը բարելավվել էր, նվազել էր ինքնախթանումով վարվեցողությունը, մեծացել էր իրենց շրջապատի նկատմամբ հետաքրքրությունը, ավելի քիչ էին պոթելումները, ավելի շատ էին խոսում, և ընդհանրապես՝ երեխաները դարձել էին ավելի բնական, չնայած բոլորովին չէին դարձանվել:

Մարդիկ մեծ տարբերություն ունեն իրարից Բ6-ի նկատմամբ իրենց կարիքով: Բ6-ի ներքո բարելավում դրսևորած երեխաները այդպես արեցին, որովհետև նրանց հարկավոր էր լրացուցիչ Բ6: Այսպիսով, օտիզմը շատ դեպքերում վիտամին Բ6-ից կախվածության համախտանիշ է:

Ավարտելուց հետո իր մասնակցությունը մեր ուսումնասիրությանը, Պրոֆեսոր Callaway-ը գնաց Ֆրանսիա, որտեղ համոզեց Պրոֆեսոր Gilbert LeLord-ին և նրա գործակիցներին, որ իրականացնեն լրացուցիչ Բ6/մագնեզիում-ի հետազոտություն օտիստիկ երեխաների վրա: Ֆրանսիացի հետազոտողները, հակառակ իրենց թերահավատության՝ որ վիտամինի նման մի անշշան բան կարող է օտիզմի նման հիմնական խանգարումի վրա ազդել, դարձան հավատացյալներ առաջին, ակամա ստանձնված, փորձարկումից հետո 44 դարձանված երեխաների վրա: Նրանք այնուհետև հրատարակեցին վեց ուսումնասիրություններ՝ արժևորելով վիտամին Բ6-ի օգտագործումը լրացուցիչ մագնեզիումով կամ առանց նրա՝ օտիստիկ երեխաների և չափահասների մոտ: Նրանց ուսումնասիրությունները սովորաբար օգտագործեցին օրական մինչև 1 գրամ վիտամին Բ6 և կես գրամ մագնեզիում:

LeLord-ը և իր գործակիցները չափեցին ոչ միայն օտիստիկ երեխաների վարվեցողությունը, այլև նրանց կողմից արտազատվող հոմոլանիլիկ թթուն (HVA) և մեզում գտնվող այլ նյութափոխանակիչներ: Բացի այդ, նրանք կատարեցին զանազան ուսումնասիրություններ, որտեղ վերլուծեցին վիտամին Բ6-ի և մագնեզիումի ազդեցությունը հիվանդի ուղեղի էլեկտրական գործունեության վրա: Բոլոր այս ուսումնասիրությունները հանգեցրին դրական արդյունքների:

LeLord-ը և իր գործակիցները վերջերս ամփոփել են 91 հիվանդներից ձեռք բերած իրենց արդյունքները՝ 14 տոկոսը բարելավվել են նշանակալիորեն, 33 տոկոսը բարելավվել են, 42 տոկոսը ոչ մի բարելավում ցույց չեն տվել, իսկ 11 տոկոսը վատացել են: Նրանք նշել են. «Բոլոր մեր ուսումնասիրություններում, կողմնակի բարդություններ չեն նշմարվել...»: Ասել կուզի, ֆիզիկական կողմնակի բարդություններ չեն նշմարվել:

Չանազան նորագույն ուսումնասիրություններ, ԱՄՆ հետազոտողների երկու խմբերի կողմից՝ Thomas Gualtieri և գործակիցներ University of North Carolina-ից և George Ellman և

գործակիցներ Կալիֆորնիայի Sonoma State Hospital-ից, նույնպես դրական արդյունքներ են ցույց տվել օտիստիկ հիվանդների կապակցությամբ:

Թեև ոչ մի հիվանդ չի բուժվել վիտամին Բ6-ի և մագնեզիումի դարմանումով, գոյություն ունեն շատ դեպքեր, երբ նշանակալի բարելավումներ են ձեռք բերվել: Այդպիսի մի դեպքում, մի 18 տարեկան օտիստիկ հիվանդ արդեն կանգնած էր այս քաղաքի երրորդ մտային հիվանդանոցից դուրս գրվելու եզրին: Մինչև անգամ խոշոր քանակով դեղեր չէին ազդում նրան, և նա համարվում էր չափից ավելի վայրագ և հարձակունակ՝ հիվանդանոցում պահվելու համար: Հոգեբույժը փորձեց վիտամին Բ6/մագնեզիումի մոտեցումը որպես վերջին միջոց: Երիտասարդը շատ արագ հանդարտվեց: Հոգեբույժը մի հավաքում տեղեկագրեց, որ վերջերս ինքը այցելել է նրա ընտանիքին և գտել է, որ այդ երիտասարդը այժմ հաճելի և համակերպվող օտիստիկ անձ է, որը իրեն համար երգել և կիթար է նվագել:

Մի ուրիշ օրինակ՝ Մի իրար անցած մայր ինձ զանգահարեց և տեղեկություն խնդրեց իր քաղաքում ապաստանային աշխատանոցի մասին, որովհետև որտեղ որ է իր 25 տարեկան օտիստիկ երեխային դուրս պիտի անեին անկառավարելի վարքի համար: Իր որդու համար ոչ մի այլընտրանքային վայրի ծանոթ չէի, բաց առաջարկեցի, որ մայրը փորձի Super Nu-Thera-ն, մի լրացուցիչ, որը պարունակում է Բ6, մագնեզիում և այլ սնուցիչներ: Մի քանի շաբաթից նա նորից զանգահարեց՝ խանդավառ ինձ ասելու համար, որ իր որդին արդեն շատ լավ էր և նրա ձեռային աշխատանքի նվազագույն վճարը տրամագծորեն բարձրացել էր շաբաթական \$1.50-ից \$25-ի:

Նկատի ունենալով հետևողական հայտնաբերումները, որոնք ցույց են տալիս Բ6 և մագնեզիում սնուցիչների անվտանգությունն ու արդյունավետությունը օտիստիկ անհատների բուժման գործում, և նկատի ունենալով դեղերի օգտագործման կարճատև և/կամ երկարատև կողմնակի բարդությունները, վստահորեն այնպես է թվում, որ այս անվտանգ և տրամաբանական մոտեցումը պետք է փորձվի դեղերի օգտագործումից առաջ: